# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

# ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

0015, Երևան 15, Արգիշտիի փողոց N 1 Հեռ. 52 58 47


№ 01/14-4743 « 21 » 07 2010 թ.

ՀՀ տրանսպորտի և կապի նախարար
պրն Ս.Վարդանյանին

*Հարգելի պարոն Վարդանյան*

*Հայաստանի Հանրապետության Նախագահի 2006թ. ապրիլի 4-ի «Հայաստանի Հանրապետության ճանապարհային երթևեկության հիմնախնդիրների լուծման միջոցառումների կատարման ժամանակացույցը հաստատելու մասին» ՆԿ-70-Ա կարգադրությամբ հաստատված միջոցառումների կատարման ժամանակացույցի 34-րդ կետի պահանջներին համապատասխան ՀՀ կառավարության 2007թ. հուլիսի 26-ի ն.957-Ն որոշմամբ սահմանվել է Երևան քաղաքի ճանապարհների թողունակության բարձրացման, կանգառ և կայանում կատարած տրանսպորտային միջոցներով երթևեկելի մասերի ծանրաբեռնվածության նվազեցման, հասարակական տրանսպորտի կանգառների կառուցակարգման և կահավորման ծրագիրը և դրանից բխող միջոցառումների ժամանակացույցը:*

*Նշված ժամանակացույցով նախատեսված միջոցառումները հիմնականում կատարված են, իսկ մնացած զգալի մասը կրում են ամենօրյա աշխատանքային բնույթ, ՀՀ պետական բյուջեից ֆինանսավորման կարիք չեն առաջացնում, իսկ հաշվի առնելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով Երևան քաղաքի նոր իրավական կարգավիճակը, կորցրել են իրենց արդիականությունը և ՀՀ կառավարության որոշմամբ սահմանման անհրաժեշտությունը:*

*Բացի այդ, ճանապարհային երթևեկության կազմակերպման և անվտանգության ապահովման հիմնախնդիրների լուծման անհրաժեշտությունից ելնելով, ՀՀ կառավարության 2009թ. օգոստոսի 13-ի ն.995-Ն որոշմամբ հաստատվել է Հայաստանի Հանրապետության և Երևան քաղաքի ճանապարհային երթևեկության անվտանգության ազգային ռազմավարությունը և հինգ տարվա գործողությունների ծրագիրը:*

*Դրա հետ մեկտեղ, հարկ եմ համարում նշել, որ Ասիական զարգացման բանկի ֆինանսավորմամբ արտասահմանյան և տեղական համապատասխան խորհրդատվական կազմակերպությունների կողմից ներկայումս նախապատրաստվող Երևանի կայուն քաղաքային տրանսպորտի ծրագրում ընդգրկված են նաև Երևան քաղաքի հասարակական տրանսպորտի համալիր զարգացման հիմնախնդիրները և դրանց լուծման հնարավոր ուղիներն ու տարբերակները:*

*Ելնելով վերոնշյալից, ՀՀ կառավարության կողմից Երևան քաղաքի ճանապարհային երթևեկության կազմակերպման և անվտանգության ապահովման խնդիրներին առնչվող նոր ծրագրի անհրաժեշտություն ներկայումս չկա և գտնում ենք նպատակահարմար ուժը կորցրած ճանաչել ՀՀ կառավարության 2007թ. հուլիսի 26-ի ն. 957-Ն որոշումը:*

Գ.Բեգլարյան

Melqumyan 47 Page 7

7541
21 07 10

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 24.9/[42058]-10**
**ՄՇՏԱՊԵՍ ԳՈՐԾՈՂ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԻՍՏԻ**

**քաղ. Երևան**

**08 հուլիսի 2010 թ.**
**ժամը՝ 15:10-ին**

*Կոմիտեի անդամներ*

| | |
|---|---|
| Ա. Հարությունյան | ՀՀ բնապահպանության նախարար |
| Գ. Դանիելյան | ՀՀ արդարադատության նախարար |
| Տ. Դավթյան | ՀՀ ֆինանսների նախարար |
| Ե. Զախարյան | ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահ |
| Դ. Սարգսյան | ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար |

*Հրավիրվածներ*

| | |
|---|---|
| Կ. Կիրակոսյան | ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության պետ |
| Ն. Սարգսյան | ՀՀ քաղաքաշինության նախարարի տեղակալ |
| ✓ Ա. Ավետիսյան | ՀՀ տրանսպորտի և կապի նախարարի տեղակալ |
| Լ. Շահվերդյան | ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարի տեղակալ |
| ✓ Կ. Արեյան | Երևանի քաղաքապետի տեղակալ |
| Ա. Ղարիբյան | ՀՀ վարչապետի խորհրդական |
| Տ. Գևորգյան | ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավարի տեղակալ |
| Կ. Մարգարյան | ՀՀ կառավարության աշխատակազմի տարածքային զարգացման և բնապահպանական վարչության պետ |
| Ա. Սարգսյան | ՀՀ կառավարության աշխատակազմի իրավաբանական վարչության պետ |
| Է. Գևորգյան | ՀՀ կառավարության աշխատակազմի անձնակազմի կառավարման վարչության պետ |

| | |
|---|---|
| Ն. Ճնգրյան | ՀՀ Նախագահի աշխատակազմի իրավաբանական վարչության պետի տեղակալ |
| Հ. Մկրտչյան | ՀՀ վարչապետի օգնական |
| Ա. Մինասյան | ՀՀ վարչապետի օգնական |
| Գ. Կարապետյան | ՀՀ կառավարության աշխատակազմի տարածքային զարգացման և բնապահպանական վարչության գլխավոր մասնագետ |
| Կ. Գևորգյան | ՀՀ կառավարության աշխատակազմի տարածքային զարգացման և բնապահպանական վարչության առաջատար մասնագետ |
| Գ. Միքայելյան | ՀՀ կառավարության աշխատակազմի տարածքային զարգացման և բնապահպանական վարչության ավագ մասնագետ |

[redacted] թյուններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ (մուտք՝ 13801)

---

(Ա. Ավետիսյան, Տ. Սարգսյան)

[redacted]

2. «ՀՀ կառավարության 2009 թվականի մայիսի 29-ի N 604-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ (մուտք՝ 12964)

---

(Կ. Արեյան, Տ. Սարգսյան)

Որոշման նախագիծը ներկայացնել ՀՀ կառավարության նիստի քննարկմանը:

3. «Երևան քաղաքի տարածքում հողերի նպատակային նշանակությունը փոխելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ (մոից՝ 12311)

---

(Գ. Արեյան, Տ. Սարգսյան)

Որոշման նախագիծը ներկայացնել ՀՀ կառավարության նիստի քննարկմանը:

4. «ՀՀ կառավարության 2006 թվականի դեկտեմբերի 21-ի N 1923-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ (մոից՝ 13200)

---

(Գ. Կիրակոսյան, Տ. Սարգսյան)

Որոշման նախագիծը ներկայացնել ՀՀ կառավարության նիստի քննարկմանը:

## ԼՐԱՑՈՒՑԻՉ ՀԱՐՑԵՐ

5. «ՀՀ կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N 1294-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու և ՀՀ քաղաքաշինության նախարարության «Լիցենզավորման կենտրոն» ու «Քաղաքաշինական ծրագրերի իրականացման գրասենյակ» գործակալությունների կանոնադրություններն ու կառուցվածքները հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ (մոից՝ 13694)

---

(Ն. Սարգսյան, Տ. Սարգսյան)

ՀՀ քաղաքաշինության նախարար Վ. Վարդանյանին՝

1) ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար Դ. Սարգսյանի հետ համատեղ ևս մեկ անգամ քննարկել որոշման նախագիծը և անհրաժեշտության դեպքում լրամշակել այն.

2) վերջնական լրամշակված տարբերակը ներկայացնել ՀՀ կառավարության նիստի քննարկմանը:

6. «Անավարտ շինարարության օբյեկտների կառուցապատողների նկատմամբ պատասխանատվության միջոցներ կիրառելու վերաբերյալ ուղեցույցին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծ (մտից՝ 14176)

---

(Դ. Սարգսյան, Տ. Սարգսյան)

1. Առաջարկել Երևանի քաղաքապետ Գ. Բեգլարյանին որոշման նախագիծը մինչև ՀՀ կառավարության նիստում քննարկվելը ուսումնասիրել որոշման նախագիծը և ըստ այդմ ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնել համապատասխան կարծիք.

2. Որոշման նախագիծը ներկայացնել ՀՀ կառավարության նիստի քննարկմանը:

7. «Հայաստանի Հանրապետության 2010 թվականի պետական բյուջեում վերաբաշխում, ՀՀ կառավարության 2009 թվականի դեկտեմբերի 24-ի N 1522-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու և ՀՀ բնապահպանության նախարարությանը գումար հատկացնելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ

---

(Ա. Հարությունյան, Տ. Սարգսյան)

1. Որոշման նախագիծը ներկայացնել ՀՀ կառավարության նիստի քննարկմանը:

2. ՀՀ բնապահպանության նախարար Ա. Հարությունյանին՝ ՀՀ ֆինանսների նախարար Տ. Դավթյանի հետ համատեղ քննարկել հատուկ հողահան էքսկավատորի տեղափոխման համար պահանջվող գումարի ֆինանսավորման հնարավորության հարցը:

## ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆ

---

Առաջարկել Երևանի քաղաքապետ Գ. Բեգլարյանին ՀՀ քաղաքաշինության նախարար Վ. Վարդանյանի հետ համատեղ ևս մեկ անգամ քննարկել «Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հունիսի 26-ի N 792-Ն որոշման (քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման օբյեկտների տարածքներում

քաղաքաշինական գործունեության իրականացման կարգը հաստատելու մասին) մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը և արդյունքները ներկայացնել ՀՀ կառավարության աշխատակազմ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ — ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ
ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ՊԵՏ — ԿԱՐԵՆ ՄԱՐԳԱՐՅԱՆ